

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ

Ս. Վ. ՎԱՐՂԱՆՅԱՆ

Գիտական բացատրության և մեկնաբանության հիմնահարցերը, թվում է, բավականին չարչրկված են փիլիսոփայական և մեթոդաբանական գրականության մեջ: Սակայն, ետխորհրդային շրջանի փիլիսոփայական առաջատար ամսագրերում լույս ընծայվող հոդվածների և թարգմանական գրականության որոշակի ուղղվածությունը հիմք է տալիս պնդելու, որ դրանք շատ այլ փիլիսոփայական հիմնահարցերի նման չեն սպառել իրենց և նոր մոտեցումների ու պարզաբանումների կարիք ունեն:

Մեկնաբանության հիմնահարցի նկատմամբ առաջին մոտեցման դեպքում հարկ է տարբերակել մեկնաբանության մեթոդը (метод истолкования) ինտերպրետացիայի մեթոդից: Թե փիլիսոփայական, թե գիտական գրականության մեջ հաճախ ինտերպրետացիայի մեթոդը ընկալվում է շատ լայն, որի հետևանքով «ինտերպրետացիա» և «մեկնաբանություն» հասկացությունները օգտագործվում են իբրև հոմանիշներ: Ընդհանրապես, «մաթեմատիկայում և տրամաբանության մեջ ինտերպրետացիա ասելով նկատի են ունենում ձևայնացված լեզվի կամ հաշվի սիմվոլներին իմաստի, նշանակության վերագրումը: Իրենք՝ նշանները, իմաստից զուրկ են և միայն ինտերպրետացիայի շնորհիվ են ձևայնացված համակարգերը իմաստ ձեռք բերում: Հենց ինտերպրետացիայի հնարավորության վրա է հիմնվում բնագիտական, տեխնիկական և հասարակական գիտությունների տարբեր ոլորտների քանակական-կառուցվածքային հարաբերությունների ուսումնասիրության համար մաթեմատիկայի ձևական կառույցների և լեզուների լայն կիրառումը»¹: Իսկ ձևայնացված տեսությունը կարելի է համարել ճշմարիտ, եթե այն իր ինտերպրետացիան է գտնում մատերիական օբյեկտներում², ուստի, այդ իմաստով, կարելի է ասել, որ ինտերպրետացիայի մեթոդը աքսիոմատիկ-դեդուկտիվ համակարգերում հանդես է գալիս որպես ձևայնացման մեթոդից հակադիր մեթոդ: Միևնույն ժամանակ մեկնաբանության մեթոդը բովանդակային տեսություններին բնորոշ մեթոդ է, որի դեպքում միտքը հայտնի երևույթներից շարժվում է դեպի նրանց պատճառները կամ հիմքերը, իսկ այնուհետև դրանցից կրկին դեպի այդ երևույթները³, որի շնորհիվ մեկնաբանությունը նույնպիսի դեդուկտիվ եզրակացության տեսք է ստանում, ինչպես գիտական բացատրությունը:

Գիտական բացատրության հիմնահարցը, չնայած հանգամանորեն մշակվել է Ջ. Միլի, Ու. Ջոնսի, Կ. Պոպերի և այլոց աշխատություններում, սակայն նրա դասական ձևակերպումը տվել է Կ. Հեմպելը: Հեմպելյան մոդելը մեթոդաբանական տեսակետից մեծ նշանակություն ունի, քանի որ միայն այդ մոդելում առկա

¹ Г. И. Рузавин. Проблема понимания и герменевтика. В сб.: «Герменевтика: история и современность», М., 1985, с. 163.

² Տե՛ս Ի. Դ. Андреев, Теория как форма организации научного знания, М., 1979, էջ 213:

³ Տե՛ս Մ. В. Асатрян, Марксизм-ленинизм с точки зрения методологии науки (критический анализ), Ер., 2000, էջ 37:

տրամաբանական համարժեքության չափանիշների շնորհիվ գիտական բացատրությունը մինչգիտական սինգուլյար կշռադատությունից վերածվեց գիտական հետազոտության մեթոդի (այդ բառի բուն իմաստով):

Գիտական բացատրության տրամաբանական կառուցվածքը հետևյալն է. *էքսպլանանդում*, որը բացատրության ենթակա երևույթը նկարագրող *E* նախադասությունն է, և *էքսպլանանս*, որը պարունակում է նախորդող հատուկ պայմանները հաստատող C_1, C_2, \dots, C_k նախադասությունները և ընդհանուր օրենքները ներկայացնող L_1, L_2, \dots, L_r նախադասությունների բազմությունը⁴: Ինչպես երևում է գիտական բացատրության տրամաբանական կառուցվածքից, գիտական բացատրության ժամանակ նույնպես միտքը հայտնի փաստերից գնում է դեպի դրանց պատճառներն ու հիմքերը, որոնք ներկայացված են էքսպլանանսում որպես ընդհանուր օրենքներ ու նախորդող պայմաններ, ապա կրկին վերադառնում է դեպի այդ փաստերը, բայց, ի տարբերություն մեկնաբանության մեթոդի, գիտական բացատրությունը անպայման ենթադրում է նոր գիտելիքի կանխատեսման հնարավորությունը: Ավելին, կանխատեսման հնարավորությունը գիտական բացատրության համարժեքության չափանիշն է⁵: Դա պայմանավորված է երկու հանգամանքով, որոնցից առաջինը և առավել կարևորը էքսպլանանսում պարունակվող ընդհանուր օրենքներն են, իսկ երկրորդը գիտական բացատրության և կանխատեսման տրամաբանական կառուցվածքի նույնականությունն է⁶ և դրանից բխող տրամաբանական համաչափության առկայությունը:

էքսպլանանսում պարունակվող օրենքները կարող են լինել դետերմինավորող (դետրոկտիվ-նոմոլոգիական բացատրություն) կամ վիճակագրական (ինդոկտիվ բացատրություն) բնույթի: Դետերմինավորող օրենքներն արտահայտվում են նոմոլոգիական ասույթի տեսքով, և քանի որ նոմոլոգիական ասույթի հիմքում ձևավորվում են հետևանքում ներկայացված օբյեկտի գոյության բավարար պայմանները, իսկ հետևանքում ձևավորվում են հիմքում ներկայացված օբյեկտի *անհրաժեշտ* պայմանները, ապա կարելի է ասել, որ *A* երևույթը բավարար պայման է *B*-ի համար, եթե, և միմիայն եթե, *B*-ն *A*-ի անհրաժեշտ պայմանն է: Օրինակ, եթե անձրևը գետինը թրջելու համար բավարար պայման է, ապա վերջինիս թացությունն անձրևի համար անհրաժեշտ պայման է: Իսկ եթե կան բավարար պայմաններ, ապա միշտ կարելի է կանխագուշակել հետևանքը:

էքսպլանանսում վիճակագրական օրենքների կիրառումը հանգեցնում է ինդոկտիվ բացատրության, որը հնարավորություն է տալիս անելու ոչ թե հավաստի, այլ միայն հավանական կանխատեսում, «քանի որ անվերջ քանակությամբ դեպքերի դիտարկումների ոչ մի վերջավոր քանակություն, որքան էլ մեծ լինի այն, չի կարող «ընդհանուր» օրենքը դարձնել հավաստի: Ուստի, ամենաշատը, որ մենք կարող ենք պնդել, այն է, որ տվյալ նախադասությունների նկատմամբ եզրակացությունը ունի հավանականության որոշակի աստիճան»⁷: Այն դեպքում, երբ հավանականությունը մոտենում է 1-ի (ասենք $\approx 0,999$, ինչպես Հեմպելի բերած մարմարե գնդիկների օրինակում)⁸, ինդոկտիվ բացատրությունը իր հավաստիությամբ մոտենում է դետրոկտիվին: Բայց, բոլոր դեպքերում, ինդոկտիվ բացատրություններին բնորոշ է այն բանի ընդունումը, որ ակնկալվող երևույթը կարող է

⁴ Տե՛ս C. G. Hempel, P. Oppenheim, *The Logic of Explanation*. In: *Readings in the Philosophy of Science*. N. Y., 1953, էջ 322:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 323:

⁶ Տե՛ս P. Карнап, *Философские основания физики*, М., 1971, էջ 57:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 323:

⁸ Տե՛ս К. Гемпель, *Мотивы и "охватывающие законы" в историческом объяснении*. В сб.: *"Философия и методология истории"*, М., 1977, էջ 74:

և տեղի չունենալ, այդ պատճառով երբեմն անհրաժեշտություն է զգացվում նոր, լրացուցիչ բացատրությունների կամ վարկածների առաջադրման համար: Դրանով իսկ գիտական բացատրության մեթոդը կապվում է ոչ միայն կանխատեսման, այլև վարկածի մեթոդի հետ:

Գիտական բացատրության համարժեքության կարևոր չափանիշ է այն, որ «Էքսպլանանդումը պետք է էքսպլանանսի տրամաբանական հետևանքը լինի, այլ խոսքով, էքսպլանանդումը պետք է տրամաբանորեն բխեցնելի լինի էքսպլանանսում պարունակվող ինֆորմացիայից. այլապես էքսպլանանսը էքսպլանանդումի հանար բավարար հիմքեր չի պարունակի»⁹: Եթե էքսպլանանսը էքսպլանանդումի համար բավարար հիմքեր է պարունակում, ապա միշտ կարելի է կանխագուշակել էքսպլանանդումի երկրորդ անգամ ի հայտ գալը: Բայց ցանկացած գիտական բացատրության ժամանակ սկզբում հայտնի է էքսպլանանդումը, և առաջին խնդիրը, որ գիտական բացատրությունը դնում է իր առաջ, էքսպլանանսի որոնումն է, այսինքն՝ էքսպլանանդումում նկարագրված երևույթի պատճառների կամ հիմքերի պարզաբանումը: Իսկ պատճառական համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե համակարգի պատմության որոշակի աստիճանում որևէ երևույթ *բավարար* պայման չէ համակարգի վերջնական վիճակի համար, նշանակում է, որ ավելի վաղ աստիճանում գոյություն չունի այդպիսի պայման, և ընդհակառակը, եթե որևէ երևույթ *անհրաժեշտ* պայման չէ համակարգի վերջնական վիճակի համար, ապա դա չի բացառում, որ որևէ երևույթ ավելի վաղ աստիճանում եղել է այդպիսի պայման: Հետևաբար, այն բացատրությունները, որոնցում որոշիչ դեր են կատարում *բավարար* պայմանները, կարող են օգտագործվել կանխատեսման համար, իսկ այն բացատրությունները, որոնցում որոշիչ են *անհրաժեշտ* պայմանները, ոչ¹⁰:

Օտտ հաճախ, հատկապես գիտելիքի ոչ գիտական կամ մինչգիտական մակարդակում բացատրությունները կառուցվում են այնպես, որ էքսպլանանսում պարունակվող ինֆորմացիան հնարավորություն չի տալիս բխեցնելու էքսպլանանդումը, քանի որ էքսպլանանսում արտահայտված են լինում *ոչ թե բավարար*, այլ *միայն անհրաժեշտ* պայմանները, ինչպես Բարկերի օրինակում (եթե հիվանդը մահացել է թոքաբորբից, ապա դա հիմք չի տալիս պնդելու, որ ամեն անգամ, երբ որևէ մեկը հիվանդացել է թոքաբորբով, ապա նա պետք է մահանա)¹¹ կամ Սքրիվենի օրինակում (եթե մկանների ակտիվ շարժումակության թուլացումը առաջացել է սիֆիլիսի հետևանքով, ապա դա չի նշանակում, որ ամեն անգամ, եթե կա սիֆիլիս, ապա պետք է լինի մկանների ակտիվ շարժումակության թուլացում)¹²: Նման դեպքերում գործ ունենք ոչ լրիվ էքսպլանանսի հետ: Այս կարգի բացատրությունները գուցե կարելի է բացատրություն համարել ողջախոհության տեսակետից, բայց մեթոդաբանական տեսակետից հետպելյան մոդելի մշակումից հետո դրանք համարժեք բացատրություններ համարվել չեն կարող, քանի որ չունեն գիտական բացատրությանը հատուկ ձևական խստությունը, սակայն ձևական խստության այդ պակասը տեղիք է տալիս ամենատարբեր մեկնաբանությունների: Հետևաբար, այս կարգի մտային կառույցները հատուկ են ոչ թե գիտական բացատրության, այլ մեկնաբանության մեթոդին, ավելին՝ ոչ լրիվ էքսպլանանսը մեկնաբանության մեթոդի տրամաբանական հիմքերից մեկն է:

⁹ C. G. Hempel, P. Oppenheim, նշվ. աշխ., էջ 321:

¹⁰ Տե՛ս Գ. X. фон Вригт, Логико-философские исследования, М., 1986, էջ 87-93:

¹¹ Տե՛ս S. Barker, The Role of Simplicity in Explanation. In: Current Issues in the Philosophy of Science, N. Y., 1961, էջ 271-272:

¹² Տե՛ս M. Scriven, Explanation and Prediction. Science, 1959, vol. 130, N 3374, էջ 478-480:

Հենպելյան մոդելի տեսակետից համարժեք չեն կարող համարվել նաև էքսպլանանսում մոտիվացիոն դրույթներ պարունակող մտային կառույցները, քանի որ.

1. առանձին մարդկանց կամ կոլեկտիվների գործողությունները անկրկնելի են, այդ պատճառով խոսել մոտիվացիոն բնույթի ընդհանուր օրենքների մասին առնվազն անհեթեթ է, ուստի, լավագույն դեպքում, կարելի է խոսել ոչ լրիվ էքսպլանանսի մասին,

2. մոտիվացիոն դրույթը սկզբունքորեն ստուգման (թեստավորման) ենթակա չէ էքսպերիմենտի կամ դիտարկման միջոցով (ինչը նույնպես հենպելյան մոդելի համարժեքության չափանիշներից է)¹³, քանի որ դիտարկման կամ էքսպերիմենտի օգնությամբ հնարավոր չէ ստույգ իմանալ ուրիշ մարդկանց մտադրություններն ու նպատակները, այլ կարելի է միայն ենթադրել, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինչով է թելադրված մարդու գործողությունը, այսինքն՝ մեկնաբանել գործողության կատարման շարժառիթները,

3. գործողության մոտիվացիոն բնույթը ենթադրում է նպատակադրվածություն, հետևաբար այն պետք է ենթարկվի ոչ թե պատճառական, այլ տելեոլոգիական վերլուծության¹⁴:

Այդպիսի տելեոլոգիական վերլուծության փորձ է արել ֆինն հայտնի տրամաբան Գ. Հ. ֆոն Վրիգտը: Հետևելով Էնսկոմբին՝ նա ուշադրություն է դարձնում Արիստոտելից եկող և «պրակտիկ սիլլոգիզմ» կոչվող մտահանգման տրամաբանական բնույթին, որը որակապես տարբերվում է ապացուցողական սիլլոգիզմից: «Պրակտիկ սիլլոգիզմ»-ի մեծ նախադրյալը բովանդակում է ինչ-որ ցանկալի բան կամ գործողության նպատակ, փոքր նախադրյալում ինչ-որ գործողություն կապվում է ցանկալի արդյունքի հետ՝ որպես դրան հասնելու միջոց, և, վերջապես, եզրակացության մեջ ասվում է միջոցի օգտագործման մասին՝ նպատակին հասնելու համար: Բայց եթե տեսական եզրակացության մեջ նախադրյալների հաստատումը անհրաժեշտորեն բերում է եզրակացության հաստատմանը, ապա պրակտիկ եզրակացության մեջ միայն համաձայնությունը նախադրյալների հետ արդեն մղում է համապատասխան գործողության¹⁵: Օրինակ, եթե պրակտիկ եզրակացության նախադրյալներից մեկն ասում է, որ երեխան խաղալիքն է ուզում, իսկ երկրորդը, որ երեխան լաց է լինում, որպեսզի ստանա այն, կարելի է եզրակացնել, որ երեխան լաց է լինում, որովհետև ուզում է խաղալիքը: Բայց երեխայի լացի պատճառը, այսինքն այն նպատակը, որ հետապնդում էր երեխայի լացը, պարզ է դառնում ռետրոսպեկտիվ ձևով՝ միայն այն բանից հետո, երբ արդեն գործողությունը կատարված է, այսինքն՝ երբ երեխան խաղալիքն ստանալով դադարեցրել է լացը: Հետևաբար, մինչ այդ մնում է միայն մեկնաբանել երեխայի լացի պատճառը, որը կարող էր լրիվ այլ նպատակ հետապնդել և, համապատասխանաբար այլ մեկնաբանություն ստանալ:

Պատմական ուսումնասիրությունների համար հենց այդպիսի մեկնաբանության մոդել է առաջադրում Դերելը՝ անվանելով դա «ուացիոնալ բացատրություն» և միաժամանակ նշելով, որ բացատրության ուացիոնալ մոդելը չի պահանջում ոչ այն, որ պատմական գործչի մոտիվները և համոզմունքները որոշակի օրենքի միջոցով գործողությունների *անհրաժեշտ* պայմանների շարքը դասվեն, ոչ այն, որ դրանց *բավարար* պայմանի նշանակություն տրվի: Արարքի բացատրության համար միանգամայն բավական է, որ նրա հիմքում ընկած մոտիվները լինեն բանականորեն անհրաժեշտ պայման, այսինքն՝ ցույց տրվի, որ առանց այդ պայմանի պատմական գործիչը հիմք չէր ունենա անելու այն, ինչ արեց: Բայց դա չի նշանակում,

¹³ Տե՛ս C. G. Hempel, P. Oppenheim, նշվ. աշխ., էջ 321:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 327:

¹⁵ Տե՛ս Գ. X. фон Вригт, նշվ. աշխ., էջ 64:

որ նրա արարքը կարելի էր կանխագուշակել՝ ելնելով այդ արարքի բավարար պայմանի իմացությունից¹⁶: Սակայն դա հիմք չի տալիս, ըստ Դրեյի, դեմ նետելու այդ կարգի հետազոտությունները, ընդհակառակը՝ բոլոր հիմքերը կան դրանք այլ տիպի հետազոտությունների հետ մեկտեղ շարունակելու համար¹⁷:

Եվ, իրոք, ճանաչողական տեսակետից մեկնաբանության մեթոդը մեծ նշանակություն ունի: Ընդհանրապես, էքսպլանանսի որոնման փուլերի հաջորդականությանը բնորոշ է ստացվող բացատրության հավանականության աստիճանի նվազումը: Դեդուկտիվ-նոմոլոգիական բացատրությունները տալիս են երևույթների հավաստի բացատրություն և, կարելի է ասել, ավելի կատարյալ են, իսկ ինդուկտիվ բացատրությունները տալիս են միայն հավանական բացատրություն և, այդ պատճառով, պակաս կատարյալ են: Բայց ավելի կատարյալ լինելու հանգամանքը ձեռք է բերվում թանկ գնով՝ համեմատաբար ոչ բարձր էվրիստիկական նշանակությամբ¹⁸: Դեդուկտիվ-նոմոլոգիական բացատրությունները կատարյալ են էքսպլանանդումի և էքսպլանանսի միջև տրամաբանական ուժեղ կապի առկայությամբ և ապացուցողականության ձևական խստությամբ, որն ավելի պակաս է արտահայտված ինդուկտիվ բացատրություններում, իսկ մեկնաբանության մեթոդի դեպքում էքսպլանանդումները և էքսպլանանսները տրամաբանական տեսակետից պրակտիկորեն անկախ են, և այդ պատճառով մեկնաբանության մեթոդը էվրիստիկական մեծ նշանակություն ունի:

Սակայն, էքսպլանանդումի և էքսպլանանսի միջև տրամաբանական հիմքի և հետևանքի հարաբերությունների թուլացումը բնավ չի նշանակում պատճառ-հետևանքային կապի թուլացում: Օբյեկտիվ իրականության մեջ ցանկացած պատճառական կապ ենթադրում է նախ՝ առաջին էտապում պարզ ժամանակային հաջորդականության հարաբերություն, երբ հետազոտողը հայտնաբերում է միայն տարբեր ժամանակներում A և B օբյեկտների ունեցած վիճակների միջև եղած կապը, և, վերջապես, ամենախոր մակարդակում հաստատվում է, որ A օբյեկտը առաջացնում է B օբյեկտը¹⁹: Մեկնաբանության մեթոդի իմացաբանական նշանակությունն այն է, որ արտահայտելով պատճառահետևանքային հարաբերություններ՝ այն հնարավորություն է տալիս հայտնաբերելու այլ օբյեկտների հետ տվյալ օբյեկտի ունեցած կապերն ու հարաբերությունները, այլ խոսքով՝ դասակարգում և համակարգում է այդ օբյեկտի մասին մեր ունեցած գիտելիքը:

Գիտական հետազոտության մեթոդներն, ընդհանրապես, խիստ որոշակի ֆունկցիաներ են իրականացնում և, որպես կանոն, օգտագործվում են նպատակաուղղված ձևով: Գիտական բացատրության մեթոդն ուղղված է արդեն հայտնի փաստերի բացատրմանը և նոր փաստերի կանխատեսման համար տրամաբանական հիմքերի նախապատրաստմանը, իսկ մեկնաբանության մեթոդը նպատակ ունի հիմնավորելու և համակարգելու արդեն հայտնի փաստերը՝ դրանք համապատասխանորեն արժեքավորելու, իմաստավորելու և վերաիմաստավորելու համար: Այդ պատճառով գիտական բացատրության մեթոդը օգտագործվում է բնագիտական տեսություններում և հաճախ զուգորդվում է ձևական խստություն և էմպիրիկ ստուգելիություն պահանջող այնպիսի մեթոդների հետ, ինչպես ֆիզիկոսները, կանխատեսումը, ինտերպրետացիան և այլն, իսկ մեկնաբանության մեթոդը օգտագործվում է բովանդակային գիտություններում, որտեղ տրամաբանական խստության պակասը և թույլ արտահայտված տրամաբանական կապերը

¹⁶ St'u Y. Дрей, Еще раз к вопросу об объяснении действий людей в исторической науке. В сб.: "Философия и методология истории", М., 1977, էջ 65:

¹⁷ St'u նույն տեղը, էջ 70:

¹⁸ St'u E. П. Никитин, Объяснение — функция науки, М., 1970, էջ 173-174:

¹⁹ St'u նույն տեղը, էջ 92-93:

լրացվում են արտատրամաբանական այնպիսի գործոններով, ինչպիսիք են երևակայությունը, ինտուիցիան և այլն: Սակայն արտատրամաբանական այդ գործոնների բացարձակացումը երբեմն հանգեցնում է մեկնաբանության մեթոդի թյուր ըմբռնմանը և ճանաչողական բովանդակության աղքատացմանը, որից խուսափելու անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է մեկնաբանության մեթոդի վերը կատարված տրամաբանական վերլուծությունը:

С. В. ВАРТАНЯН - *Логическое обоснование метода истолкования.* -

В статье метод истолкования представлен как специфический прием исследования, характерный для содержательных теорий. Логический анализ метода истолкования дает возможность избегать неадекватных его пониманий, которые в одних случаях, считая истолкование лишенным познавательного смысла мысленным построением, отождествляют его с научным объяснением, а в других случаях - отождествляют с интерпретацией, выделяя тем самым лишь семантический аспект истолкования. В статье, наряду с познавательной значимостью метода истолкования как способа классификации и систематизации знания, подчеркивается и его эвристическая важность.